ԱՄՓՈՓ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ

ՀՀ բարձրագույն և հետբուհական կրթության 2025-2026 թվականների բյուջետային արդյունքները և 2027-2029 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագիրը

Սույն վերլուծությունը իրականացվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի, «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի և «Ագորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ-ի (Չեխիա) հետ համագործակցաբար գործարկվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Բարձրագույն կրթության երրորդ մակարդակի ուսումնառության բարելավում. իմաստավոր կրեդիտային համակարգ» ծրագրի շրջանակում:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ» հասարակական կազմակերպությունը և հեղինակը,և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Վերլուծության հեղինակ՝ Աննա Բաղալյան:

Ներածություն

Պետական բյուջեն հանդիսանում է Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական քաղաքականության իրականացման հիմնական ֆինանսական գործիքը, որի միջոցով ապահովվում է հանրային միջոցների արդյունավետ բաշխումն ու օգտագործումը՝ ուղղված պետական առաջնահերթությունների և ռազմավարական նպատակների իրագործմանը: Հանրային միջոցների նպատակային և արդյունավետ կառավարումը կարևոր նախապայման է պետական կառավարման արդյունավետության, ֆինանսական կայունության և հանրային ծառայությունների որակի բարձրացման համար:[1]

Սույն զեկույցի նպատակն է իրականացնել հանրային միջոցների հատկացումների բյուջետային վերլուծություն՝ ուսումնասիրելով ՀՀ կրթության բնագավառի և մասնավորապես բարձրագույն և հետբուհական կրթության լորոտի 2025 և 2026 թվականների պետական բյուջեների կատարողականը և ֆինանսավորման ցուցանիշները, ինչպես նաև գնահատելով ՀՀ ԿԳՄՍ նախարարության 2027-2029 թվականների բյուջետային ֆինանսավորման հայտերի և կից հավելվածների հիման վրա նախատեսված ֆինանսական հատկացումներն ու առաջնահերթությունները:

Վերլուծության ընթացքում ուսումնասիրվել են բյուջետային հատկացումների դինամիկան, ծրագրային ֆինանսավորման փոփոխությունները, ծախսերի կառուցվածքը, ինչպես նաև պետական քաղաքականության հիմնական ուղղությունները՝ միջնաժամկետ պլանավորման համատեքստում:

[1] https://www.arlis.am/hy/acts/202183?utm_source

Ընդհանուր իրավիճակ

2026 թվականի պետական բյուջեն նախատեսվել է եկամուտների գծով՝ **3,090.9 մլրդ. ՀՀ դրամ**, ծախսերի գծով՝ **3,627.6 մլրդ. ՀՀ դրամ**, իսկ դեֆիցիտի գծով՝ **536.8 մլրդ. ՀՀ դրամ**, ինչը կազմում է համապատասխանաբար ՀՆԱ-ի **25.9%**, **30.4%** և **-4.5%**:

Համեմատության համար՝ 2025 թվականի պետական բյուջեով նախատեսվել էր **2,837.6 մլրդ ՀՀ դրամ** եկամուտ, **3,441.6 մլրդ. ՀՀ դրամ** ծախս և **604.0 մլրդ. ՀՀ դրամ** դեֆիցիտ: Այսպիսով, 2026 թվականին, 2025 թվականի համեմատ, **եկամուտներն աճել են 253.3 մլրդ. ՀՀ դրամով (մոտ 8.9%)**, **ծախսերը՝ 186.0 մլրդ ՀՀ դրամով (մոտ 5.4%)**, մինչդեռ **դեֆիցիտը նվազել է 67.2 մլրդ. ՀՀ դրամով (մոտ 11.1%)**:[2]

- 2025 թվականին կրթության ոլորտի ֆինանսավորումը տարեկան պլանով կազմել է **309,6 մլրդ. ՀՀ դրամ**, որը տարվա ընթացքում ճշտվել է մինչև **347,1 ՀՀ մլրդ դրամ**: Փաստացի իրականացված ծախսերը կազմել են **330,4 մլրդ ՀՀ դրամ**, իսկ բյուջեի կատարողականը՝ **95,2%**:
- 2026 թվականի պետական բյուջեով կրթության ոլորտին նախատեսվել է հատկացնել **383,0 մլրդ. ՀՀ դրամ**, ինչը 2025 թվականի փաստացի ծախսերի համեմատ ավելի է **52,6 մլրդ. ՀՀ դրամով կամ շուրջ 15,9%-ով**, իսկ 2025 թվականի տարեկան ճշտված պլանի համեմատ՝ **35,9 մլրդ. ՀՀ դրամով կամ շուրջ 10,3%-ով**: Միաժամանակ, պետական բյուջեի հիմնավորման համաձայն, 2026 թվականի հատկացումները նախորդ տարվա հաստատված բյուջեի համեմատ աճել են **58,2 մլրդ. ՀՀ դրամով կամ 17,9%-ով**: Այս աճը պայմանավորված է կրթության ոլորտում պետական քաղաքականության առաջնահերթությունների պահպանմամբ, կրթության որակի բարձրացմանը և ոլորտի զարգացմանն ուղղված լրացուցիչ ֆինանսական միջոցների նախատեսմամբ:
- ՀՆԱ-ի նկատմամբ կրթության ծրագրերին ուղղված ծախսերի կշիռը **2026 թվականին կկազմի 3.2%**, մինչդեռ **2025 թվականին այն կազմել է 2.9%**: Այսպիսով, ցուցանիշն աճել է **0.3 տոկոսային կետով**:

Աղյուսակ 1. Դինամիկ վերլուծություն (2023–2026թթ.) կրթության բյուջե[3]

---

[2] https://www.arlis.am/hy/acts/200713 https://www.arlis.am/hy/acts/217676

[3] **Աղբյուր՝** ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայք՝ «Հաշվետվություններ» բաժին, https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner/ **աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից**:

Տարի	Տարեկան պլան (մլրդ. ՀՀ դրամ)	Տարեկան ճշտված պլան (մլրդ. ՀՀ դրամ)	Փաստացի (մլրդ. ՀՀ դրամ)	Կատարողական (%)
2023	223,3	199,5	186,5	93.4
2024	318,2	320,9	257,8	80.3
2025	309,5	337,6	210,5	62.3
2026	383.0			

2025թ-ի կրթության բյուջեի կառուցվածքը և ցուցանիշները

2025 թվականին կրթության ոլորտում իրականացվել է **15 բյուջետային ծրագիր**: Ոլորտի համար նախատեսված տարեկան պլանը կազմել է **309,586.8 մլն. ՀՀ դրամ**, որը տարվա ընթացքում ճշտվել է մինչև **347,146.1 մլն. ՀՀ դրամ**: Փաստացի իրականացված ծախսերը կազմել են **330,358.6 մլն. ՀՀ դրամ**, ինչի արդյունքում բյուջեի կատարողականը կազմել է **95.2%**:

Աղյուսակ 2. Կրթության ոլորտի բյուջետային ծրագրերի ֆինանսավորման կատարողականը, 2025 թ.

Ծրագիր	Տարեկան պլան (մլն. ՀՀ դրամ)	Ճշտված պլան (մլն. ՀՀ դրամ)	Փաստացի (մլն. ՀՀ դրամ)	Կատարողական (%)
Ընդամենը (կրթություն)	**309,586.8**	**347,146.1**	**330,358.6**	**95.2**
1045. Մասնագիտական կրթության և ուսուցման	15,268.7	14,928.5	13,541.1	90.7
1111. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն	14,164.3	14,007.0	13,563.4	96.8
1130. Կրթության ոլորտում քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ	1,911.3	2,053.7	1,918.9	93.4
1146. Հանրակրթություն	132,760.8	148,742.0	142,523.6	95.8
1148. Արտադպրոցական դաստիարակություն	3,940.7	4,195.2	4,030.5	96.1
1162. Գիտական և գիտատեխնիկական հետազոտություններ	33,912.2	38,022.2	36,784.4	96.7
1183. Ապահով դպրոց	791.0	830.9	810.6	97.6
1189. Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացում	10,704.8	13,528.0	12,097.3	89.4
1192. Կրթության որակի ապահովում	15,757.4	18,017.2	17,422.6	96.7
1193. Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում	3,804.0	4,174.3	3,895.2	93.3

1215. Միջազգային և սփյուռքի հետ համագործակցություն	398.3	446.0	424.5	95.2
1227. Կրթության ոլորտում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրում	876.7	1,009.1	969.5	96.1
1236. Կրթական հաստատությունների կառուցում, բարելավում և հիմնանորոգում	84,420.2	85,109.4	76,240.9	89.6
1238. Նախադպրոցական կրթություն	4,031.0	4,121.4	3,948.4	95.8
1240. Ակադեմիական քաղաքի ստեղծում	2,114.1	2,961.2	2,188.7	73.9

Ծրագրերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ամենամեծ ֆինանսական ռեսուրսներն ուղղվել են **«Հանրակրթություն» (1146)** և **«Կրթական հաստատությունների կառուցում, բարելավում և հիմնանորոգում» (1236)** ծրագրերին, որոնք զբաղեցնում են կրթության ոլորտի ծախսերի հիմնական մասը: Միաժամանակ բարձր կատարողական են արձանագրել **«Ապահով դպրոց» (97.6%)**, **«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն» (96.8%)**, **«Գիտական և գիտատեխնիկական հետազոտություններ» (96.7%)** և **«Կրթության որակի ապահովում» (96.7%)** ծրագրերը:

Համեմատաբար ցածր կատարողական է գրանցվել **«Ակադեմիական քաղաքի ստեղծում» (73.9%)**, **«Մասնագիտական կրթության և ուսուցման» (90.7%)**, **«Կրթական հաստատությունների կառուցում, բարելավում և հիմնանորոգում» (89.6%)** և **«Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացում» (89.4%)** ծրագրերում, ինչը կարող է պայմանավորված լինել կապիտալ ծրագրերի իրականացման ժամկետների փոփոխությամբ, մրցութային գործընթացների ձգձգմամբ կամ շինարարական աշխատանքների ուշացմամբ:

2026թ-ի կրթության բյուջեի կառուցվածքը և ցուցանիշները

2026 թվականին կրթության ոլորտում պետական քաղաքականությունն իրականացվել է 15 բյուջետային ծրագրերի միջոցով: Ծրագրերը, դրանց ուղղվող բյուջետային հատկացումների տվյալները ներկայացված են ստորև աղյուսակում.

Աղյուսակ 3. 2026 թվականի կրթության ոլորտի բյուջետային ծրագրերի ֆինանսավորման ցուցանիշները[4]

Ծրագիր	**2026 թ. բյուջե (մլն. ՀՀ դրամ)**
Կրթություն	**383,000.0**
1045 Մասնագիտական կրթության և ուսուցման ծրագիր	16,414.1
1111 Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն	13,331.5
1130 Քաղաքականության մշակում, համակարգում և մոնիտորինգ	1,884.4
1146 Հանրակրթության ծրագիր	139,731.8
1148 Արտադպրոցական դաստիարակություն	4,008.7
1162 Գիտական և գիտատեխնիկական հետազոտություններ	29,224.3
1183 Ապահով դպրոց	836.7
1189 Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարձրացում	8,574.8
1192 Կրթության որակի ապահովում	19,532.7
1193 Ներառական կրթության համակարգի ներդրում	4,045.3
1215 Միջազգային և սփյուռքի համագործակցություն	513.7
1227 ՏՀՏ ներդրում կրթության ոլորտում	932.0
1236 Հաստատությունների կառուցում և բարելավում	137,140.7
1238 Նախադպրոցական կրթություն	1,883.7
1240 Ակադեմիական քաղաքի ստեղծում	4,966.4

Ֆինանսավորման ամենամեծ մասն ուղղվում է **հանրակրթության ծրագրին (139.7 մլրդ. ՀՀ դրամ)** և **հանրակրթական ու նախադպրոցական հաստատությունների կառուցման և բարելավման ծրագրին (137.1 մլրդ. ՀՀ դրամ)**, որոնք միասին կազմում են կրթության ոլորտի ընդհանուր հատկացումների շուրջ **72%-ը**: Զգալի միջոցներ են նախատեսվել նաև **գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների (29.2 մլրդ. ՀՀ դրամ)**, **կրթության որակի ապահովման (19.5 մլրդ դրամ)** և **մասնագիտական կրթության և ուսուցման (16.4 մլրդ. ՀՀ դրամ)** ծրագրերի համար: Միաժամանակ, համեմատաբար փոքր բյուջետային հատկացումներ են նախատեսվել ՏՀՏ ներդրման, միջազգային և սփյուռքի հետ համագործակցության, ինչպես նաև «Ապահով դպրոց» ծրագրերի համար:

Միաժամանակ 2026 թվականին «1111. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն» ծրագրի ֆինանսավորումը նախատեսվել է **13.3 մլրդ. ՀՀ դրամ**, ինչը **2025 թվականի փաստացի ծախսերի համեմատ նվազել է 231.9 մլն. ՀՀ դրամով կամ 1.7%-ով**: 2025 թվականի տարեկան պլանի համեմատ վերը նշված բյուջետային ծրագրի ֆինանսավորումը նվազել է **832.8 մլն. ՀՀ դրամով (5.9%)**, իսկ ճշտված պլանի համեմատ՝ **675.5 մլն. ՀՀ դրամով (4.8%)**: Չնայած ֆինանսավորման որոշակի նվազմանը, **2025 թվականին ծրագրի կատարողականը կազմել է 96.8%;**

[4] https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner/

Աղյուսակ 4 «1111. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն» ծրագրի դինամիկան, 2025-2026 թթ. (մլն. ՀՀ դրամ)[5]

Ցուցանիշ	2025	2026 (I եռամսյակ)	Փոփոխություն (+/-)	Աճ/նվազում (%)
Տարեկան պլան	14,164.3	13,331.5	-832.8	-5.9%
Ճշտված պլան	14,007.0	13,334.8	-672.2	-4.8%
Փաստացի / Նախատեսված	13,563.4	2,444.8		
Կատարողական	96.8%	94.6%	-	–

2027-2029թթ. Միջնաժանկետ ծախսային ծրագիր (ՄԺԾԾ)[6]

2027-2029 թվականների ՄԺԾԾ-ով «1111. Բարձրագույն կրթություն» ծրագրի բազային ֆինանսավորումը պահպանվում է շուրջ **14.2 մլրդ. ՀՀ դրամի** մակարդակում: Միաժամանակ նախատեսված են նոր նախաձեռնություններ, որոնց արդյունքում ծրագրի ընդհանուր ֆինանսավորումը **2028 թվականին հասնում է 17.5 մլրդ. ՀՀ դրամի**, ինչը պայմանավորված է հիմնականում **ICPC աշխարհի ծրագրավորման եզրափակիչ մրցույթի[7] կազմակերպման համար նախատեսված 3.0 մլրդ. ՀՀ դրամով**: Բացի այդ, բոլոր երեք տարիներին ֆինանսավորում է նախատեսվում **գերակա ուղղությունների համապատասխան կրթական ծրագրերի բովանդակային վերանայման** համար, որի ծավալը 2027 թվականի **142.0 մլն. ՀՀ դրամից** աճում է մինչև **416.4 մլն. ՀՀ դրամ՝** 2029 թվականին: Ծրագրի շրջանակում ամենամեծ ֆինանսավորումը շարունակաբար ուղղվում է **ուսանողական նպաստների (10.6 մլրդ. ՀՀ դրամ)** և **կրթաթոշակային աջակցության** միջոցառումներին:

Աղյուսակ 5. 2027-2029 ՄԺԾԾ, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն» բյուջետային ծրագիր

---

[5] Աղբյուր՝ ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում հրապարակված տվյալների հիման վրա, աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից:
[6] Աղբյուր՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 2027-2029 թվականների բյուջետային հայտի և կից հավելվածների (Հավելված 12, ծրագրեր՝ 1111, 1162, 1240) տվյալների հիման վրա, աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից: https://www.hesc.am/hy/file/15569/ https://www.hesc.am/hy/2026/03/31/15562/

Միջո-ցառման դասիչը	Միջոցառում	2027թ. բյուջե (հազ. ՀՀ դրամ)	2028թ. բյուջե (հազ.ՀՀ դրամ)	2029թ. բյուջե (հազ. ՀՀ դրամ)
11001	Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայություններ	43,113.5	43,113.5	43,113.5
11003	Բարձրագույն կրթության որակի ապահովման ծառայություններ	59,989.5	59,989.5	59,989.5
11007	Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի անդամակցությամբ պայմանավորված բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումներ	45,010.7	45,010.7	45,010.7
12001	Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ	1,200,000.0	1,200,000.0	1,200,000.0
12002	Հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ բուհական հաստատություններում	565,920.0	691,020.0	816,120.0
12003	Ասպիրանտական կրթաթոշակներ գիտական հաստատություններում սովորողներին	103,560.0	79,620.0	55,680.0
12004	Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում	10,567,766.4	10,567,766.4	10,567,766.4
12005	Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում բուհական հաստատություններում	551,764.9	656,764.9	762,444.9
12006	Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում գիտակրթական հաստատություններում	39,849.7	32,178.1	23,867.2
12007	Երևանում բարձրագույն կրթության հասանելիության ապահովում մարզաբնակ ուսանողներին, կեցության վարձավճարի փոխհատուցում մարզաբնակ և օտարերկրյա ուսանողներին	41,335.9	41,335.9	41,335.9
12008	Ուսումնական վարկերի տոկոսավճարների մասնակի փոխհատուցում	53,900.0	60,700.0	66,000.0
12011	2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Ղարաբաղից բռնի տեղահանված և ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողներին ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրում	329,500.0	247,500.0	-

12012	Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում սովորող ուսանողների ուսման վարձի փոխհատուցում	530,000.0	530,000.0	530,000.0
Նոր	Գերակա ուղղություններին համապատասխանող և անհրաժեշտ կրթական ծրագրերի բովանդակային վերանայում	141 950,0	241 400,0	416 370,0
Նոր	ICPC աշխարհի եզրափակիչ 2028	-	3,000,000.0	-

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն» ծրագրի ֆինանսավորման դինամիկան 2025–2029 թվականներին հիմնականում աճողական է, սակայն որոշակի տատանումներով: 2025 թվականին ծրագրի փաստացի ֆինանսավորումը կազմել է **13,563.4 մլն. ՀՀ դրամ**, իսկ 2026 թվականի պետական բյուջեով նախատեսվել է **13,331.5 մլն. ՀՀ դրամ**, ինչը նախորդ տարվա փաստացի ցուցանիշի համեմատ **նվազել է 231.9 մլն.ՀՀ դրամով կամ 1.7%-ով**:
ՄԺԾԾ-ով 2027 թվականի համար ծրագրի ֆինանսավորումը նախատեսվում է **14,284.7 մլն. ՀՀ դրամ**, ինչը **2026 թվականի համեմատ աճ է 953.2 մլն. ՀՀ դրամով կամ 7.2%-ով**: 2028 թվականին ֆինանսավորման ծավալը նախատեսվում է հասցնել **17,507.4 մլն. ՀՀ դրամի**, որը **2027 թվականի համեմատ աճում է 3,222.7 մլն. ՀՀ դրամով կամ 22.6%-ով**՝ պայմանավորված բազային ֆինանսավորման հետ մեկտեղ **նոր նախաձեռնությունների ֆինանսավորման ներառմամբ**: 2029 թվականին ծրագրի ֆինանսավորումը կանխատեսվում է **14,638.7 մլն, ՀՀ դրամ**, ինչը **2028 թվականի համեմատ նվազում է 2,868.7 մլն, ՀՀ դրամով կամ 16.4%-ով**, սակայն շարունակում է **2026 թվականի մակարդակը գերազանցել 1,307.2 մլն. ՀՀ դրամով կամ 9.8%-ով**:

Գծապատկեր 1. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն»

ծրագրի ֆինանսավորման դինամիկան, 2025–2029 թվականներ (2027–2029 թթ.՝ ՄԺԾԾ)[8]



Եզրակացություն

Կատարված բյուջետային վերլուծությունը ցույց է տալիս, որ 2026 թվականին կրթության ոլորտի ֆինանսավորումը շարունակել է աճել՝ 2025 թվականի փաստացի ծախսերի համեմատ ավելանալով **52.6 մլրդ. ՀՀ դրամով (15.9%)**, իսկ ՀՆԱ-ում կրթության ծախսերի մասնաբաժինը բարձրացել է **2.9%-ից մինչև 3.2%**: Սա վերջին ժամանակների պետական հատկացումներ/ՀՆԱ հարաբերակցության ամենաբարձր ցուցանիշն է: Միևնույն ժամանակ, կրթության ոլորտի 2025 թվականի բյուջեի կատարողականը կազմել է **95.2%**:

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն» բյուջետային ծրագրի շրջանակներում 2025 թվականին փաստացի ֆինանսավորումը կազմել է **13,563.4 մլն. ՀՀ դրամ**, իսկ բյուջեի կատարողականը՝ **96.8%**: 2026 թվականի պետական բյուջեով ծրագրի համար նախատեսվել է **13,331.5 մլն. ՀՀ դրամ**, որը 2025 թվականի փաստացի ցուցանիշից պակաս է **231.9 մլն. ՀՀ դրամով (1.7%)**: Միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսվում է, որ ֆինանսավորումը 2027 թվականին կկազմի **14.28 մլրդ. ՀՀ դրամ**, 2028 թվականին՝ **17.51 մլրդ. ՀՀ դրամ**, իսկ 2029 թվականին՝ **14.64 մլրդ. ՀՀ դրամ**:

2028 թվականի զգալի աճը պայմանավորված է հիմնականում **ICPC աշխարհի ծրագրավորման եզրափակիչ մրցույթի կազմակերպման** համար նախատեսված **3.0 մլրդ. ՀՀ դրամ** լրացուցիչ հատկացմամբ, ինչը սակայն միանգամյա միջոցառմանն ուղղված ծախս է: Այնուհանդերձ ՄԺԾԾ-ն նախատեսում է

[8] Աղբյուր՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության 2027–2029 թվականների բյուջետային հայտին կից հավելվածներ (նախնական տվյալներ), գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից: https://www.hesc.am/hy/file/15569/

որոշակիկայուն աճ կրթական ծրագրերի բովանդակային վերանայման ֆինանսավորման ուղղությամբ:[9]

[9] Սույն բաժնում ներկայացված ծրագրերի և միջոցառումների մակարդակի տվյալները հիմնված են ՀՀ ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքում հրապարակված 2027-2029 թվականների բյուջետային ֆինանսավորման հայտերի և կից հավելվածների վրա: Քանի որ դրանք բյուջետային հայտի տվյալներ են, դրանք նախնական են և կարող են տարբերվել հետագայում հաստատված պետական բյուջեի ցուցանիշներից: https://www.hesc.am/hy/file/15569/ https://www.hesc.am/hy/